


Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ



17 Օգոստոս 2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն**: Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում**:

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **գուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Նախորդ շաբաթ ԱՄՆ բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական արդյունքներ բացառությամբ DowJones-ից:




Բաժնեթի գործակիցը սահմանում է նոր ռեկորդային մակարդակներ:




ԱՄՆ երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները աճեցին:



Ոլորտների շրջանում լավագույն արդյունքը գրանցեցին էներգակիրները:



Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 0.40%-ով




Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 1.11%-ով



Նախորդ շաբաթ Dow Jones-ը նվազեց 0.52% -ով



Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 1.17%-ով



Նախորդ շաբաթ
Nasdaq-ը և Russell
2000-ը շուկայի առա-
ջատար ինդեքսներն
էին, մինչդեռ Dow-ն
միակ խոշոր ինդեքսն
էր, որը շաբաթն
ավարտեց բացասական
եկամտաբերությամբ:



Normalized As Of 08/07/2026

Sector	Last Price
State Street Energy Select Sector SPDR ETF	7.7044
State Street Financial Select Sector SPDR ETF	1.0504
State Street Industrial Select Sector SPDR ETF	0.6858
State Street Health Care Select Sector SPDR ETF	1.2102
State Street Technology Select Sector SPDR ETF	0.9204
State Street Utilities Select Sector SPDR ETF	1.6854
State Street Consumer Discretionary Select Sector SPDR ETF	-1.1847
State Street Materials Select Sector SPDR ETF	-0.5486
State Street Consumer Staples Select Sector SPDR ETF	1.1161
State Street Real Estate Select Sector SPDR ETF	0.5669

Վերջին շաբաթներին ծրագրային ապահովման բաժնետոմսերը կտրուկ աճ գրանցեցին՝ վերականգնելով տարվա ընթացքում կորցրածը: Տարեսկզբից կիբերանվտանգության ընկերությունները գրանցել են շուրջ 80–100% աճ, DDOG և SNOW-ն՝ 50–80%, մինչդեռ մի շարք Software as a Service (SaaS) ընկերություններ, այդ թվում՝ INTU, HUBS, CRM և ADBE, շարունակում են զգալիորեն հետ մնալ:



Cisco Systems (CSCO)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում գրանցեց 15.3 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան կտրվածքով 10% աճ: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 1.04 դոլար՝ գերազանցելով սպասումները: AI ենթակառուցվածքների նկատմամբ աճող պահանջարկը շարունակում է մնալ հիմնական աճի շարժիչը, հատկապես networking և data-center լուծումների ոլորտում: Ընկերությունը պահպանեց դրական կանխատեսումները՝ 2026թ-ի հասույթի համար 61.2–61.7 մլրդի սահմաններում:



Applied Materials (AMAT)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում գրանցեց ռեկորդային 7.91 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան կտրվածքով 11% աճ: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 3.51 դոլար, տարեկան աճը 33%: Արդյունքները ցույց տվեցին կիսահաղորդիչների արտադրության սարքավորումների նկատմամբ կայուն պահանջարկ, հատկապես AI ենթակառուցվածքների ընդլայնման ֆոնին: Ընկերությունը շարունակում է ներդրումներ կատարել նոր սերնդի կիսահաղորդիչների տեխնոլոգիաների ուղղությամբ՝ երկարաժամկետ աճի հնարավորությունները մեծացնելու համար:



Nebius Group (NBIS)-ը երկրորդ եռամսյակում գրանցել է 582.3 մլն դոլարի հասույթ՝ տարեկան կտրվածքով գրանցելով տպավորիչ աճ 454%: AI Cloud-ի հիստույթը աճել է 514%-ով՝ հասնելով 574.9 մլն դոլարի: AI ենթակառուցվածքների նկատմամբ պահանջարկը շարունակում է արագ աճել, ընկերությունը պահպանեց 2026 թվականի իր ամբողջական կանխատեսումները: Միաժամանակ, Nebius-ը ակնկալում է, որ տարվա ընթացքում հաճախորդների կանխավճարները կգերազանցեն 9 մլրդ դոլարը՝ ապահովելով հետագա արագ ընդլայնման ֆինանսական հիմքը:

JD.com (JD)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում գրանցեց 346.4 մլրդ յուանի (51.1 մլրդ դոլար) հասույթ՝ տարեկան կտրվածքով նվազելով 2.9%-ով: Զուտ շահույթը կազմել է 7.1 մլրդ յուան (1.1 մլրդ դոլար), իսկ մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS)՝ 0.74 դոլար՝ նախորդ տարվա 0.61 դոլարի դիմաց: հաշվետվությունը ցույց տվեցին շահութաբերության բարելավում՝ չնայած հասույթի նվազմանը, մինչդեռ JD.com-ը շարունակում է զարգացնել լոգիստիկայի, տեխնոլոգիաների և նոր բիզնեսների ուղղությունները:



Գնաճի մեղմացումը և թույլ տնտեսական ակտիվությունը կտրուկ նվազեցրին սեպտեմբերին Դաշնային պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքի բարձրացման սպասումները: Հուլիսին գնաճը մնաց սպասվածից ցածր, իսկ մանրածախ վաճառքները նվազեցին 0.6%-ով՝ ցույց տալով սպառման թուլացում: Այս տվյալները, նախորդ շաբաթվա թույլ աշխատաշուկայի ցուցանիշների հետ մեկտեղ, նվազեցրին ԴԴՀ-ի քաղաքականության հետագա խստացման հավանականությունը: Արդյունքում՝ սեպտեմբերին տոկոսադրույքի բարձրացման շուկայական սպասումները հուլիսի վերջի 75%-ից նվազեցին մինչև 25%-ի:



Շաբաթվա կարևոր ազդակներից մեկը գանձապետական պարտատոմսերի աճուրդներն էին: Չնայած գնաճի մեղմացմանը և ԴՊՀ-ի տոկոսադրույքի բարձրացման սպասումների նվազմանը՝ 10 և 30-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունը հասավ պատմականորեն բարձր մակարդակների: Սա ցույց է տալիս, որ շուկան կարող է հավատալ ԴՊՀ-ի խստացման փուլի ավարտին, բայց դեռ չի վստահում գնաճի լիարժեք հաղթահարմանը: Երկարաժամկետ պարտատոմսերի վրա շարունակում են ճնշում գործադրել բյուջետային մեծ դեֆիցիտները, պարտքի առաջարկը և գնաճային անորոշությունը:



Դոլարը թուլացավ՝ ԱՄՆ-ում տոկոսադրույքների բարձրացման սպասումների նվազման ֆոնին: Տոկոսադրույքի իջեցման սպասումները թուլացնում են դոլարի գրավչությունը, իսկ կապիտալը սկսում է տեղափոխվել այլ շուկաներ:

Ոսկին շարունակում է մնալ բարենպաստ մակրոտնտեսական միջավայրի շահառուն մեղմ գնաճը, թույլ դոլարը, աշխարհաքաղաքական ռիսկերը և նվազող տոկոսադրույքների սպասումները աջակցում են ոսկու աճին:



Նավթի գնի աճը կարող է բարձրացնել ընդհանուր գնաճը և գնաճային սպասումները՝ ճնշելով պարտատոմսերի եկամտաբերությունն ու սահմանափակելով ԴՊՀ-ի մեղմացման հնարավորությունները: Սակայն առավել մտահոգիչ է վերամշակված վառելիքի գների աճը, քանի որ դրա ազդեցությունն ավելի անմիջականորեն է զգացվում սպառողների ծախսերի և գնաճի վրա:



Կրիպտոարժույթները շաբաթն ավարտեց զգալի անկմամբ CLARITY Act-ի շուրջ անորոշության ֆոնին: Օրինագիծը պետք է հստակեցնի թվային ակտիվների կարգավիճակը և SEC-ի ու CFTC-ի միջև վերահսկողության սահմանները: Սենատի կողմից օրինագծի քվեարկությունը հետաձգվել էր սեպտեմբեր, ինչը նվազեցրել է դրա՝ մինչև տարեվերջ ընդունելու հավանականությունը: Այս ֆոնին Բիթքոինը վերադարձավ մայիսից ձևավորված միջակայքի ստորին հատված:




Բաժեթի գործակիցը նախորդ շաբաթ հասել է ռեկորդային մակարդակի՝ վկայելով շուկայի բարձր գերազնահաման մասին:



DIFFERENT BACKDROP FOR ENERGY ETFs TODAY vs. EARLIER IN SUMMER

**Էներգետիկ ֆոնդերից
կապիտալի արտահոս-
քը արագանում է**

Վերջին 65 առևտրային օրերին ԱՄՆ էներգետիկ ETF-ներից դուրս է եկել մոտ 4 մլրդ դոլար, իսկ XLE-ETF-ից օգոստոսյան արտահոսքը հասել է 797 մլն դոլարի: Սա ցույց է տալիս, որ ներդրողների հետաքրքրությունը էներգետիկ ոլորտի նկատմամբ արագ թուլանում է, չնայած նավթի գների աճին:




Source: Baird Strategas, Bloomberg, ETF Action, 8/10/26

ԱՄՆ սպառողների պարտքային բեռը շարունակում է մտահոգիչ մնալ

Ուսանողական վարկերի լուրջ ժամկետանցումները հասել են 10.6%-ի, իսկ վարկային քարտերի և ավտովարկերի 90+ օր ժամկետանցումները շարունակում են մնալ պատմականորեն բարձր մակարդակներում: Սա վկայում է, որ սպառողները գնալով ավելի դժվարությամբ են սպասարկում իրենց պարտավորությունները:

Percent of Balance 90+ Days Delinquent by Loan Type



Expectations of higher stock prices

Mean probability that U.S. stock prices will be higher one year from now

OVERVIEW

DEMOGRAPHICS

Percent

60

40

20

0

2014

2015

2016

2017

2018

2019

2020

2021

2022

2023

2024

2025

2026

Source: New York Fed Survey of Consumer Expectations

ԱՄՆ սպառողների շրջանում ենթադրվող հավանականությունը, որ ԱՄՆ բաժնետոմսերի գները մեկ տարի անց ավելի բարձր կլինեն, հուլիսին աճել է 0.5 տոկոսային կետով՝ հասնելով 41.4%-ի, որը ամենաբարձր ցուցանիշն է 2021 թվականի ապրիլից ի վեր: Մարտից ի վեր այս ցուցանիշը աճել է 5%-ով՝ հասնելով 2020-ի համավարակից ի վեր երկրորդ ամենաբարձր մակարդակին: Համեմատության համար, 2020 թվականի ապրիլին ամենաբարձր կետը կազմել է 51.8%: Տարիքային առումով, 40 տարեկանից փոքր սպառողներն ամենալավատեսն են:


Վերջին 10 տարիներին ԱՄՆ դաշնային կառավարության եկամուտներն աճել են 65%-ով՝ հասնելով 5.3 տրիլոն դոլարի, մինչդեռ ծախսերն աճել են 96%-ով՝ մինչև 7.3 տրիլոն դոլար: Արդյունքում՝ ազգային պարտքը հասել է մոտ 39 տրիլոն դոլարի: Ծախսերի և եկամուտների միջև աճող տարբերությունը շարունակում է մեծացնել ԱՄՆ-ի պարտքային բեռը:

US Federal Government Spending vs. Tax Revenue

(Data via Treasury.gov: in \$Millions, July 2016 - July 2026)




ԱՄՆ ռազմավարական նավթի պահուստը հասել է 1983թ-ից ի վեր ամենացածր մակարդակին՝ վերջին 5 տարում նվազելով մոտ 322 մլն բարելով կամ 52%-ով: Սա զգալիորեն սահմանափակում է ԱՄՆ-ի հնարավորությունները՝ նոր նավթային մատակարարման շուկի դեպքում շուկան արագ կայունացնելու համար:



Լեվերիջ ETF-ների նոր թողարկումներում ներդրողների հետաքրքրությունը կենտրոնանում է հիշողության չիպերի վրա: SNXX-ETF-ի AUM-ը թողարկումից ի վեր աճել է մոտ 1.5 մլրդ դոլարով, իսկ RAM-ETF-ինը՝ մոտ 500 մլն դոլարով: Սա ցույց է տալիս, որ ներդրողների ախորժակը հիշողության չիպերի նկատմամբ և՛ աճում է, և՛ դառնում ավելի ագրեսիվ՝ Լեվերիջ գործիքների միջոցով:

Largest US-Listed Levered ETFs Launched YTD

(values in \$ millions)



Source: Bloomberg, Goldman Sachs Global FICC & Equities

Այս շաբաթ 104, ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի երկրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Walmart (WMT), Home Depot (HD), Alibaba Group (BABA), The TJX Companies (TJX), Deere & Company (DE), Lowe's Companies (LOW), Target Corporation (TGT), Baidu (BIDU) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	↓ Market Cap	P/E	Price
1	✳️ WMT	Walmart Inc	Consumer Defensive	Discount Stores	USA	917.33B	40.61	115.27
2	🏠 HD	Home Depot Inc	Consumer Cyclical	Home Improvement Retail	USA	337.88B	24.06	338.86
3	🔄 BABA	Alibaba Group Holding Ltd ADR	Consumer Cyclical	Internet Retail	China	296.76B	19.99	123.81
4	▶️ ADI	Analog Devices Inc	Technology	Semiconductors	USA	189.67B	57.87	389.39
5	👕 TJX	TJX Companies Inc	Consumer Cyclical	Apparel Retail	USA	168.04B	29.55	152.11
6	🚜 DE	Deere & Co	Industrials	Farm & Heavy Construction Machinery	USA	164.35B	34.50	608.85
7	🏠 LOW	Lowe's Cos. Inc	Consumer Cyclical	Home Improvement Retail	USA	122.50B	18.48	218.47
8	📺 NTES	NetEase Inc ADR	Communication Services	Electronic Gaming & Multimedia	China	79.69B	16.75	125.12
9	👕 ROST	Ross Stores Inc	Consumer Cyclical	Apparel Retail	USA	78.71B	34.20	245.36
10	🎯 TGT	Target Corp	Consumer Defensive	Discount Stores	USA	70.16B	20.39	154.48
11	🔑 KEYS	Keysight Technologies Inc	Technology	Scientific & Technical Instruments	USA	61.15B	58.95	357.82
12	🚢 VIK	Viking Holdings Ltd	Consumer Cyclical	Travel Services	Bermuda	43.72B	36.49	97.99
13	💄 EL	Estee Lauder Cos. Inc	Consumer Defensive	Household & Personal Products	USA	31.15B	-	86.10
14	🐼 BIDU	Baidu Inc ADR	Communication Services	Internet Content & Information	China	28.84B	-	103.67
15	📡 FN	Fabrinet	Technology	Electronic Components	Cayman Islands	20.43B	49.03	570.22
16	🏈 AS	Amer Sports Inc	Consumer Cyclical	Leisure	Finland	19.01B	40.72	32.87
17	🚗 HSAI	Hesai Group ADR	Consumer Cyclical	Auto Parts	China	18.96B	325.76	18.21
18	🏠 BEKE	KE Holdings Inc ADR	Real Estate	Real Estate Services	China	18.11B	40.93	17.01
19	🏭 NDSN	Nordson Corp	Industrials	Specialty Industrial Machinery	USA	17.20B	32.94	308.72
20	🏠 AEG	Aegon Ltd	Financial	Insurance - Diversified	Netherlands	14.22B	13.38	9.45

⤴	TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	FORECAST	PREVIOUS
⤴	Monday, Aug. 17					
⤵	8:30 AM	Empire State Manufacturing Survey	Aug.	-	12	15.6
⤵	10:00 AM	NAHB Housing Market Index	Aug.	-	33	34
⤴	Tuesday, Aug. 18					
⤵	8:30 AM	Housing Starts	Jul.	-	1.3M	1.4M
⤵	8:30 AM	Import Prices	Jul.	-	0.1%	0.3%
⤵	9:15 AM	Industrial Production, M/M%	Jul.	-	0.4%	0.1%
⤵	9:15 AM	Capacity Utilization %	Jul.	-	76.4%	76.1%
⤵	10:00 AM	Pending Home Sales Idx, M/M%	Jul.	-	0%	-5.4%
⤴	Wednesday, Aug. 19					
⤵	2:00 PM	Federal Open Market Committee meeting minutes published	-	-	-	-
⤴	Thursday, Aug. 20					
⤵	8:30 AM	Philadelphia Fed Business Outlook Survey	Aug.	-	25	41.4
⤵	8:30 AM	Weekly Jobless Claims	Aug. 15	-	205K	209K
⤵	10:00 AM	Leading Indicators	Jul.	-	0%	-0.2%
⤴	Friday, Aug. 21					
⤵	9:45 AM	US Flash Manufacturing PMI	Aug.	-	54.3	53.8
⤵	9:45 AM	US Flash Services PMI	Aug.	-	53.8	53.6

